

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

(Մատենադարանի վերակազմության 25-ամյակի առթիվ)

Մատենադարանը 1500-ամյա իր գոյության ընթացքում միշտ եղել է Հայաստանի և ողջ Անդրկովկասի ձեռագրական մշակույթի առավել խոշոր կենտրոններից մեկը: Քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով էջմիածնի Մատենադարանի ձեռագրական հավաքածոները երբեմն նվազել են, հյուսվել և նորից համալրվել այն սնող հայ գրչության մյուս օջախների հաշվին: Կոբուստներ շատ են եղել, բայց Մատենադարանը կանգուն է մնացել: 1920 թ. վերջերին, երբ Հայաստանում հաղթանակեց սովետական իշխանությունը, նրա ֆոնդերում պահվում էր 4600 ձեռագիր:

Սովետական Հայաստանի կառավարության առաջին դեկրետներից մեկով էջմիածնի վանքի ձեռագրական հավաքածոն ազգայնացվեց և դրվեց Պետական Մատենադարանի՝ ՀԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին արքնթեր Զեռագրատան հիմքում: Նոր էջ սկսվեց Մատենադարանի կյանքում: Հայ ժողովրդի ձեռագրական ժառանգությունը դարձավ համընդհանուր ուշադրության առարկա: Հանրապետության կոմունիստական կուսակցության և կառավարության հողատարության շնորհիվ ձեռագրական հավաքածոն սկսեց անընդհատ աճել, հարստանալ նորանոր արժեքավոր մատյաններով, ավելի լայնորեն մշտնեկ գիտական շրջանառության մեջ, առատ աղբյուր ծառայել սովետական հայագետների և արևելագետների հետազոտությունների համար: 1939 թ. Մատենադարանը էջմիածնից տեղափոխվեց Երևան և տեղավորվեց Պետական հանրային գրադարանի երկու հարկերում: Մատենադարանի՝ միայն ձեռագրատանապահոցի կարգավիճակ ունեցող հին շրջանակները նեղ դարձան: Հասունացել էր գիտակազմակերպչական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Մատենադարանը հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի վերափոխելու գաղափարը պատկանում է Հովսեփ Արզարի Օրբելուն՝ 1943 թ. տեղեկված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտին: Այդ գաղափարը չիրմորեն պաշտպանվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, մասնավորապես, նրա առաջին քարտուղար Գ. Ա. Հարությունյանի կողմից: Ընթանում էր Հայրենական մեծ պատերազմը, բայց կուսակցությունն ու կառավարությունը արդեն նախանշում էին խաղաղ շինարարության հեռանկարային պլանը: Հին հայկական ձեռագրերի հազվագյուտ իր հավաքածոյով Մատենադարանը պետք է դուրս գար դեպի նոր բնագծեր:

Գեո 1944 թ. ակննավոր շինարար, Երևանի գլխավոր ճարտարապետ Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին և նրա ղեկավարած արվեստանոցին առաջադրանք արվեց նախապատրաստել հատուկ շենքի նախագիծ, որտեղ հաշվի առնված լինեն ձեռագրերի և՛ պահպանության, և՛ ուսումնասիրության համար անհրա-

ձեռն լուր պայմանները: Մատենադարանի շենքի համար տեղն ընտրեցին ակադ. Հ. Ա. Օրբելին և Գ. Ա. Հարությունյանը՝ Լենինի պողոտայի առանցքին, Քանաքեռյան բարձրավանդակի ստորոտում, քաղաքի տարբեր մասերից երկվացող բարձունքի վրա:

1945 թվականին նախագիծը պատրաստ էր, և շուտով էլ սկսվեց շինարարությունը: Միջնադարյան հայ ճարտարապետության ոճով կառուցված վեհակերտ շենքի շինարարությունն ավարտվեց 1957 թվականին: Մատենադարանի տնօրինությունն այդ տարիներին ծրագրված աշխատանք էր տանում ձեռագրերի հավաքման և վերականգնման ուղղությամբ:

1959 թ. մարտի 3-ի ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Պետական ձեռագրատունը վերակառուցվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ «Մատենադարանի»: Ինստիտուտը տեղափոխվեց նոր շենք և 1959 թ. ապրիլի 16-ից սկսեց գործել որպես հանրապետության գիտական մտքի խոշոր օջախներից մեկը: Մատենադարանի կյանքում ևս նոր էջ բացվեց: Կառավարության որոշմամբ ակադեմիայի համակարգի տարբեր ինստիտուտներից այստեղ տեղափոխվեցին միջնադարագիտության ասպարեզում աշխատող մի շարք աղբյուրագետներ, բնագրագետներ, պատմաբաններ, փիլիսոփաներ, արվեստագետներ: Մատենադարանի հին աշխատակիցների հետ միասին նրանք աշխատանք ծավալեցին ինստիտուտի առջև դրված նոր խնդիրները կատարելու համար: Բացի ձեռագրերի հավաքման, պահպանման և վերականգնման պարտականություններից, Մատենադարանին վերապահվեց նաև հայ բնագրագիտության, ձեռագրագիտության, գիտական մատենագիտության և աղբյուրագիտության գծով առաջատար հիմնարկի դերը:

Ձեռագրերի հավաքման ծրագրված աշխատանքը, որ սկսվել էր Հայաստանում սովետական իշխանության առաջին օրերից, նոր խթան ստացավ: Ինստիտուտի վերածվելու և նոր շենք տեղափոխվելու հետ կապված, ձեռագիր հուշարձանների, դիվանական վավերագրերի և հնատիպ գրքերի հավաքման գործը լայն թափ ստացավ և նպաստեց բոլոր ֆոնդերի հարստացմանը: Ներկայումս, 1984 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Մատենադարանի ձեռագիր ֆոնդերը պարունակում են պահպանության 16175 միավոր, որից 13623-ը հայերեն գրչագրեր են (այդ թվում՝ 10927-ը ամբողջական ձեռագիր մատյաններ), ավելի քան 2500 այլալեզու գրչագրեր (պարսկերեն, արաբերեն, ասորերեն, հունարեն, լատիներեն, հին սլավոներեն, վրացերեն և այլ լեզուներով), ինչպես նաև՝ 150000 հին դիվանական վավերագրեր:

Ձեռագիր ֆոնդերի հարստացմանը նպաստում է Մատենադարանի ակտիվ հավաքչական գործունեությունը: Մշտապես գործող հնագրագիտական արշավախումբը, որը հետախուզական և բացատրական աշխատանք է տանում հանրապետության քաղաքների և գյուղերի բնակչության շրջանում, անընդհատ համալրում է ֆոնդերը հայ գրչության արժեքավոր հուշարձաններով: Այդ աշխատանքի շնորհիվ ձեռագրերի շատ սեփականատերեր, իսկ այդպիսիք գյուղական բնակչության մեջ դեռևս քիչ չեն, իրենց ընտանեկան սրբությունները նվիրում են Մատենադարանին: Դրանց մեջ հանդիպում են այնպիսի հազվագյուտ միավորներ, ինչպես ՀՍՍՀ Սպիտակի շրջանի Գոգարան գյուղի IX դարի ավետարանը: Ձեռագրերի մի մասն էլ, ինստիտուտի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվելուց հետո, գնվում է: Մատենադարանը հաշվառում

և մանրաժապավինում է այն ձեռագրերը, որոնք դեռևս մնում են մասնավոր անձանց մոտ: Մյուս ուղին, որով ձեռագրերը Մատենադարան են հասնում, սփյուռքահայության նվիրատվություններն են: Հատուկ հիշատակության են արժանի նշու Յորբից Հարություն Հազարյանը, որը Մատենադարանին է նվիրել իր՝ տարբեր երկրներում գնած և հավաքած 397 ձեռագրերը, Փարիզից՝ Ռաֆայել Մարկոսյանը, որը հայրենիքին էր կտակել 37 գրչագիր, Նոս Անշելոսից՝ Արշակ Տիգրանյանը, Լիոնից՝ Հովհաննես Պոստանյանը և շատ ուրիշներ, որոնք Մատենադարանի հավաքածուները հարստացրել են տասնյակ և հարյուրավոր հաշիերեն և այլալեզու ձեռագրերով, դիվանական վավերագրերով և հնատիպ գրքերով: Մատենադարանի աշխատակիցները ձեռագրերի փնտրտուք են անում նաև արտասահմանյան գործուղումների ժամանակ, և, որպես կանոն, ոչ քիչ քանակությամբ հին ձեռագրեր բերում իրենց հետ, որ նվեր են ստանում արտասահմանում ապրող իրենց հայրենակիցներից: Պլանաշափորեն իրականացվող հավաքչական աշխատանքի շնորհիվ ներկայումս արդեն Մատենադարանում է հավաքված հաշիերեն հին ձեռագրերի համաշխարհային ֆոնդի կեսը: Կարված աշխատում է Մատենադարանի վերականգնման արհեստանոցը, որտեղ մշակված են մադողաթյա և թղթյա ձեռագրերի, ինչպես նաև կաշվե կազմերի վերականգնման եղանակներ:

Անցած 25 տարիների ընթացքում Մատենադարանում ձեռագրերի վերականգնման, սահպանման և հավաքման աշխատանքների հետ միասին, ծավալվել է բնագրագիտական, աղբյուրագիտական և հնագրագիտական հետազոտությունների լայն ծրագիր, մշակվել և իրականացվել է հոգևոր մշակույթի եղանակի հուշարձանները գիտական շրջանառության մեջ դնելու պլանը: Հատուկ ուշադրություն է դարձվել հայ հին մատենագրության այն շերտերին, որոնք դուրս էին մնացել նախահեղափոխական հետազոտողների տեսադաշտից՝ փյուսոփայությանը, բնագիտությանը, բերականությանը, երաժշտությանը և այլն: Սակայն առաջին տեղում շարունակել է մնալ պատմագրությունը՝ հայ մատենագրության առավել կարևոր բնագավառներից մեկը: Արևելքի և Արևմուտքի երկրների հետ սերտ շփման մեջ գտնվող Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքի շուրահատուկ պայմաններն իրենց արտահայտությունն են գտել նրա պատմիչների, տարեգիրների երկերում, հիշատակարանների և պատմական այլ գրվածքների հեղինակների մոտ՝ դառնալով միաժամանակ Իրանի, Բյուզանդիայի, Վրաստանի, Աղվանքի, Ասորիքի, Արաբական խալիֆայթի, Թուրքիայի, Առաջավոր Ասիայի և Մերձավոր ու Միջին արևելքի այլ երկրների պատմության ուսումնասիրման արժեքավոր աղբյուր: Հայ պատմագրական հուշարձանների հրատարակության գործում հատուկ ուշադրություն է դարձվել այն երկերին, որոնք ո՛չ նախահեղափոխական և ո՛չ սովետական ժամանակաշրջանում բնական հրատարակություն չէին ունեցել: Այդ հրատարակություններից առաջինը մոնղոլ-թաթարական ներխուժումներին ժամանակակից, XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի բնական բնագրի հրատարակումն էր 1961 թվականին: Այս գործն առաջնային նշանակություն ունի ամբողջ Անդրկովկասի պատմությունը լուսարանելու, ինչպես նաև իրենց՝ մոնղոլ-թաթարների պատմության համար, որոնց մոտ գերության մեջ լինելով, հեղինակն ուսումնասիրել, ապա նկարագրել է նրանց լեզուն, սովորություններն ու բարքերը: Բնագիրը կազմող Կ. Մելիք-Օհանջանյանը օգտագործել է Մատենադարանի բոլոր և արտասահմանյան հավաքածուներում պահվող

մատչելի ձևագրերի մեծ մասը: Հրատարակությունն օժտված է ընդարձակ պատմաբանասիրական ուսումնասիրությամբ, սպառիչ մատենագիտությամբ և տարբեր ցանկերով: Մատենագարանը Կիրակոս Գանձակեցու երկը հրատարակել է նաև ռուսերեն թարգմանությամբ 1976 թվականին, համամիութենական «Памятники письменности Востока» մատենաշարով (թարգմ. Լ. Խանչարյան):

Մյուս կարևոր հրատարակությունը Արիստակես Լաստիվերացու «Պատմութեան» հրապարակումն էր (հրատ. 1963 թ., կազմ. Կ. Յուզբաշյան), որն արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի XI դարի պատմության, հայ-բյուզանդական հարաբերությունների, թոնդրակյան աղանդավորական շարժման գաղափարախոսության ուսումնասիրման համար: Լաստիվերացին, որպես նկարագրվող դեպքերին ժամանակակից և ականատես, արժեքավոր վկայություններ է բերում թուրք-սելջուկների, Հայաստան և սահմանակից երկրներ նրանց կատարած արշավանքների մասին: Ապա Լաստիվերացու «Պատմութիւնը» հրատարակվել է ռուսերեն թարգմանությամբ նույն՝ «Памятники письменности Востока» մատենաշարով (հրատ. 1968 թ., թարգմ. Կ. Յուզբաշյան):

Թուրքական ազրեսիայի և Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականության դեմ պայքարի մի էջին է նվիրված XVII դարի հայ պատմիչ Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին իսթինու» (հրատ. 1964 թ.) երկը, որը հետաքրքիր տվյալներ է պարունակում ուկրաինացի և լեհ ժողովուրդների Օսմանյան կայսրության դեմ մղած պայքարի, և այդ պայքարին Գալիցիայի և Պոդոլիեի հայերի մասնակցության մասին: Ռուսերեն թարգմանությունը հրապարակվել էր ավելի վաղ՝ 1958 թ., ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 2, էջ 258—286):

Կարևոր հրապարակումների թվին են պատկանում վաղ միջնադարի հայ պատմագիրներ Սեբեոսի (VII դար) և Մովսես Կաղանկատվացու (VIII դար, շարունակույժը՝ 10-րդ դ.) երկերի բնական բնագրերի հրատարակությունները: Սեբեոսի «Պատմութիւնը» (հրատ. 1979 թ., կազմ. Գ. Աբգարյան) եզակի պատմական տեղեկություններ է պարունակում VII դարում Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև պատերազմների, արաբների առաջին արշավանքների ու Սասանյանների անկման և, իհարկե, Հայաստանում և Անդրկովկասում քաղաքական իրադարձությունների մասին: Ինչ վերաբերում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկին (հրատ. 1983 թ., կազմ. Վ. Առաքելյան), ապա այն Հայոց Արևելից կողմանց՝ Ուտիք և Արցախ նահանգների, պատմության ուսումնասիրման համար անփոխարինելի աղբյուր է, ինչպես նաև արժեքավոր տեղեկություններ է պարունակում Բուն Աղվանքի ցեղերի և ժողովուրդների մասին, որոնք ապրում էին Կովկասյան լեռնաշղթայի և Քուռի միջև ընկած տարածքում: Մովսես Կաղանկատվացու երկը Մատենագարանը հրատարակել է նաև ռուսերեն թարգմանությամբ (1984 թ., թարգմ. Շ. Սմբատյան):

Պետք է նշել, որ Մատենագարանում վերջին 25 տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվել ռուսերեն թարգմանություններին: Քանի որ հայ պատմագրական, և ոչ միայն պատմագրական, հուշարձանների նկատմամբ անընդհատ աճում է արևելագետների և գիտության մյուս ճյուղերի ներկայացուցիչների հետաքրքրությունը, և նրանցից բշերն են տիրապետում գրաքարին, ապա ռուսերեն լեզվով թարգմանությունների երկարաժամկետ ծրագրի-

բը և այն իրականացնելու պլանաչափ աշխատանքն արդեն տվել է շոշափելի արդյունքներ: Բացի վերոհիշյալներից, ուսերեն թարգմանությամբ հրատարակվել են V դարի պատմիչ Կորյունի «Վարք Մաշտոցի» (հրատ. 1962 թ., թարգմ. Շ. Սմբատյան և Կ. Մելիք-Օհանջանյան), XVII դարի ճանապարհորդ Սիմեոն Լեհացու «Ուղեգրութիւնք» (հրատ. 1965 թ., թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան), XVII դարի տարեգիր Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւնք» (հրատ. 1969 թ., թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան), XII—XIII դարերի «Պատմութիւն անանուն զրուցագրի (կարծեսյալ Շապուհ Բագրատունի)» (հրատ. 1971 թ., թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան): 1971 թ. լույս տեսավ V դարի պատմիչ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի՝ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու կատարած նոր թարգմանությունը (հետմահու հրատարակություն, լրացված Կ. Յուզբաշյանի կողմից): Ավելի վաղ՝ 1957 թ. Մատենադարանը հրատարակել էր Եղիշեի ստեղծագործության քննական բնագիրը (կազմ. Ե. Տեր-Մինասյան), որից և կատարված է ուսերեն թարգմանությունը: 1973 թ. հրատարակվեցին հայ պատմագրության նաև այլ նշանավոր հուշարձանների թարգմանություններ. XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը (թարգմ. Լ. Խանլարյան) և Արրահամ Կրետացու «Պատմութիւնք», որը նկարագրում է 1735—1736 թթ. իրադարձությունները և կաթողիկոս-հեղինակի՝ նազիր-շահի հետ հանդիպումը (թարգմ. Ն. Ղորղանյան): Ավարտված և հրատարակության է հանձնված IX—X դարերի նշանավոր պատմագիր Հովհաննես Գրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ի ուսերեն թարգմանությունը (թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան): Ավարտին է մոտենում «XIII—XVIII դարերի մանր ժամանակագրություններ» հետաքրքիր ժողովածուի թարգմանության աշխատանքը (թարգմ. Լ. Խանլարյան): «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Անանուն Եղեսացու «Ժամանակագրությունը»՝ գրված XIII դարում (1982 թ., թարգմ. ասորերենից Լ. Տեր-Պետրոսյանի): Հրատարակվել է նաև «Վրաց ժամանակագրությունը (1207—1318 թթ.)», թարգմ. վրացերենից Պ. Մուրադյանի:

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-քաղաքական և հոգևոր կյանքի տարբեր կողմերի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն նաև հայ վարքագրական գրականության հուշարձանները, բազմաթիվ վարքերն ու վկայարանությունները, որոնք գեղարվեստական գրականության հիանալի նմուշներ լինելով, միաժամանակ արժեքավոր պատմական աղբյուրներ են: 1973 թ. Մատենադարանը ուսերեն թարգմանությամբ հրատարակել է «Հայ վարքագրական հուշարձաններ» ժողովածուի առաջին հատորը (կազմ. և թարգմ. Ք. Տեշ-Դավթյան), որն ընդգրկում է V—XV դարերի վարքագրական գրականության լավագույն նմուշները: Պատրաստ է տպագրության այս ժողովածուի երկրորդ հատորը, որի մեջ մտել են XV—XVIII դդ. վարքեր և վկայարանություններ:

Պատմագրության և վարքագրական գրականության հուշարձանների կողքին, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մերձավոր արևելքի երկրների պատմության լուսաբանման համար ոչ նվազ կարևոր նշանակություն ունեն հայկական ձեռագրերի հարյուրավոր և հազարավոր հիշատակարանները, որոնք գրված լինելով մեծ մասամբ գրչի շարքային մշակների կողմից, խոշոր քաղաքական իրադարձությունների հետ միասին ավելի մանրամասն են ար-

տացելում ամենօրյա կենցաղը, հասարակության տարբեր խավերի դժվարություններն ու ակնկալիքները: Հիշատակարանների հեղինակներն, ի տարբերություն իշխող դասակարգի պատմիչ-ներկայացուցիչների, հիմնական ուշադրությունը նվիրում են ստորին դասերի՝ քաղաքային բնակիչների, գյուղացիների, արհեստավորների կյանքին: Հիշատակարանները, որ երկար ժամանակ չէին գրավում հետադոտողների ուշադրությունը, ըստ արժանվույն գնահատվեցին միայն վերջին 20—30 տարիների ընթացքում: Այդ գործում մեծ վաստակ ունի Մատենադարանի նախկին տնօրեն, ականավոր պատմաբան-աղբյուրագետ, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանը, որը հիշատակարանների հավաքման և հրատարակման գործը սկսել էր դեռևս Մատենադարանի վերակազմությունից շատ առաջ: 1950 թ. նա հրատարակեց XIV դարի հիշատակարանների մեծածավալ հատորը: Ապա, 1955 և 1958 թթ. լույս տեսան XV դարի հիշատակարանների 1-ին և 2-րդ հատորները, իսկ գիտահետադոտական ինստիտուտ դառնալուց հետո, արդեն 1967 թ. նրա կողմից հրատարակվեց վերջին, եզրափակիչ հատորը, որն ընդգրկում է հայերեն ձեռագրերի XV դարի վերջին երկու տասնամյակների հիշատակարանները: Նրա հանձնարարությամբ սկսվեց մինչև XIV դարը գրված հիշատակարանների հավաքման աշխատանքը: Մատենադարանի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մաթևոսյանը հաջողությամբ կատարեց այդ պատասխանատու և աշխատատար գործը: 1984 թ. լույս տեսավ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար» սովորաբար սովալ հատորը: Լույս կտեսնի արտադրություն իջեցված «Ե—ԺԲ դարերի հիշատակարանների» հատորը: Նրա խմբագրությամբ, համարյա միաժամանակ, լույս տեսավ XVII դարի հիշատակարանների 3-րդ հատորը, որը կաղմել էր հայտնի բնագրագետ և աղբյուրագետ, հանգուցյալ Վ. Հակոբյանը: Մատենադարանի տնօրինությունը պլանավորում է առանձին գրքով ուսերեն թարգմանությամբ հրատարակել V—XVII դարերի հիշատակարանների հատընտիր ժողովածու:

Անցած ժամանակամիջոցում մեծ աշխատանք է կատարվել նաև դիվանական վավերագրերի ուսումնասիրության բնագավառում, որոնք լույս են սփռում սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր կողմերի վրա: Հիշատակության են արժանի «Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ» երկու պրակները (1-ին պրակ, 1956, 2-րդ պրակ, 1959., հրատ. Լ. Փափազյան), որոնք պարսկերեն բնագրի հետ միասին պարունակում են փաստաթղթերի հայերեն և ուսերեն թարգմանությունները: Լույս է տեսել «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը (ԺԵ—ԺԶ դդ.)» առաջին հատորը (1968 թ., հրատ. Լ. Փափազյան), որն ընդգրկում է ավատատիրական հողատիրության և ազրարային հարաբերությունների պատմությանը վերաբերող կարևոր փաստաթղթեր: Հրատարակվել է «Հայկական գորքը XVIII դարում» փաստաթղթերի ժողովածուն (1968 թ., հրատ. Ա. Խաչատրյան), որը հետաքրքիր տվյալներ է պարունակում հայ ազատագրական շարժման պատմության, ուս և հայ ժողովուրդների մարտական համագործակցության մասին:

Ուշագրավ հրապարակումներից է «Գիվան Հայոց պատմության» նոր շարքի առաջին հատորի հրատարակությունը (1984 թ., հրատ. Վ. Գրիգորյան), որտեղ կարևոր փաստաթղթեր են հավաքված Մատենադարանում պահվող կաթողիկոսական գիվանից: Բաղմահատոր այս հրատարակությունը սկսվել էր դեռ նախահեղափոխական շրջանում և ընդհատվել 1916 թվականին: Նոր շար-

քի առաջին հատորն ընդգրկում է XVIII դարի 80-ական թվականների փաստաթղթերը: Պատրաստ են տպագրության նաև հաջորդ հատորները: Սույն հրատարակությունն, անշուշտ, կգրավի Հայաստանի և Անդրկովկասի XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի սկզբների սոցիալ-քաղաքական կյանքի տարբեր կողմերի ուսումնասիրությամբ զբաղվող պատմաբանների ուշադրությունը:

Տնտեսական կյանքի պատմության, միջազգային առևտրի և Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև տնտեսական կապերի հաստատման գործում հայ վաճառականության դերի հարցերով զբաղվող մասնագետների ուշադրությունը կհրավի Մատենադարանի հիմնած «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարը: Այդ մատենաշարով 1984 թ. հրատարակվել է «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը» (հրատ. Լ. Խաչիկյան և Հ. Փափազյան), հայ մի վաճառական, որը 1680-ական թվականներին առևտրական նպատակներով եղել է Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում ու տվել այդ երկրների ապրանքների, նրանց գների, կշռի չափերի, առևտրական ճանապարհների, արհեստագործական արտադրության կենտրոնների և այլնի մասին մանրամասն տեղեկություններ: Հատկապես Նեպալի և Տիբեթի, այդ ժամանակ եվրոպացիներին դեռևս անմատչելի երկրների, մասին նրա հաղորդած տեղեկությունները եզակի են:

Միջնադարյան Հայաստանի տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքին վերաբերող եզակի տեղեկություններ են սփռված հայ հեղինակների բաղձաթիվ քարտեզներում, ճառերում, խրատներում և տարբեր բնույթի մեկնություններում: Դրանց վրա հատուկ ուշադրություն էր դարձրել ակադ. Լ. Խաչիկյանը, այդ հարցին նվիրելով մի շարք արժեքավոր հոդվածներ: Նրա հանձնարարությամբ պատրաստվեց «Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը» (1977 թ., աշխատասիրությամբ է. Բաղդասարյանի) ուսումնասիրությունը և բնագրերի հրատարակությունը, որը նշված ուղղությամբ կատարված առաջին հրատարակումներից է:

Հիմնադրվեց նաև «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարը, որն ընդգրկելու է թարգմանական գրականության լավագույն նմուշները՝ իրենց բնական բնագրերով: 1984 թ. լույս տեսավ V դարի ամենաուշագրավ թարգմանություններից մեկը՝ Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» երկի բնական բնագիրը (աշխատությամբ Կ. Մուրադյանի): 1984 թ. լույս տեսավ «Ծննդոց գրքի» բնական բնագիրը (աշխատ. Ա. Զեյթունյանի): Պատրաստ են տպագրության «Մակաբայեցոց գիրքը» և այլ բնագրեր:

Վերջին 25 տարիների նշանակալի ձեռքբերումներից մեկն էլ կապված է հայ փիլիսոփայական հուշարձանների աղբյուրագիտության, բնագրագիտության և ուսերեն թարգմանության բնագավառի լարված աշխատանքի հետ: Մատենադարանի հրատարակումները գիտական շրջանառության մեջ դրեցին հայ հին և միջնադարյան փիլիսոփաների ստեղծագործությունների ամբողջ մի շարք և հնարավորություն ընձեռեցին վերականգնել հոգևոր մշակույթի մինչ այդ շուտումնասիրված՝ հայ փիլիսոփայական մտքի պատմության բնագավառը: Նշված ժամանակամիջոցի ընթացքում ծրագրված հրատարակվել են V—VI դարերի ամենախոշոր փիլիսոփաներից մեկի՝ Դավիթ Անհաղթի ստեղծագործությունների բնագրերը և ուսերեն թարգմանությունները: 1960 թ. հրատարակվեց նրա «Սահմանք իմաստասիրութեան», 1967 թ.՝ «Մեկնութիւն ի վերլուծա-

կանն Արիստոտելի», 1976 թ.՝ «Վերլուծութիւն ներածութեանն Պորփիրի» (հրատ. և զուգահեռ ռուսերեն թարգմանությունները Ս. Արևշատյանի): 1980 թ., երբ նշվում էր Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը, առանձին գրքով, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք» ընդհանուր վերնագրով նորից հրատարակվեցին գրաբար բնագրերը (հրատ. Ս. Արևշատյան): Մոսկվայում, «Փիլիսոփայական ծառանգություն» մատենաշարով, հրատարակվեց «Դավիթ Անհաղթ. Ստեղծագործություններ» (թարգմ., ներած. և ծանոթագր. Ս. Արևշատյանի), իսկ Երևանում՝ «Հայ մատենագիրներ» մատենաշարով, աշխարհաբար թարգմանությամբ լույս տեսավ «Դավիթ Անհաղթ. Երկեր» (թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Արևշատյանի): Մեծ ուշադրություն է դարձվել նաև այլ մտածողների: Հրատարակվել է «Անանուն մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի» (1961 թ., հրատ. Վ. Չալոյան և Ս. Լալաֆարյան, ռուս. թարգմ. Ս. Արևշատյանի), XIII դարի նշանավոր փիլիսոփա Վահրամ Բարունու «Լուծմունք Ստորոգութեանցն Արիստոտելի» (1967 թ., հրատ. և թարգմ. Գ. Գրիգորյան), V դարի ականավոր փիլիսոփա, գիտնական և թարգմանիչ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1968 թ., թարգմ. Վ. Չալոյան), V—XV դարերի հայ փիլիսոփաների բնագրերի ընտրանին՝ «Համաշխարհային փիլիսոփայության անթուղգիայում» (Մոսկվա, 1969 թ., կաղմ. և թարգմ. Ս. Արևշատյան): Վերջին 25 տարիների ընթացքում կատարված բոլոր այս հրատարակումներն ու թարգմանությունները հնարավոր դարձրեցին հետազոտական մեծ աշխատանք ծավալել հայ փիլիսոփայության պատմության վերաբերյալ, լուսարանել հոգևոր մշակույթի և գիտության ամբողջ մի բնագավառ, ստեղծել հայ փիլիսոփայական մտքի պատմությունն ընդհանրացնող աշխատություններ և նրա զարգացման առավել կարևոր փուլերին նվիրված մի շարք մենագրական հետազոտություններ:

Մատենադարանի աշխատակիցների տեսադաշտում են գտնվել նաև միջնադարյան քերականագիտական և բառարանագրական հուշարձանները: Հրատարակվել են XIII—XIV դդ. նշանավոր գիտնական Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» (հրատ. 1966 թ.) և XIII դարի հեղինակ Վարդան Արեւիկցու «Մեկնութիւն քերականի» (1972 թ.) ստեղծագործությունների քննական բնագրերը: Հրատարակվել է նաև Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» երկհատոր ուսումնասիրությունը (1-ին հ. 1966 թ., 2-րդ հատ. 1971 թ.): Հրատարակվել է Քոնայի դպրոցի հիմնադիր Հովհաննես Քոնեցու (XIV դ.) «Յաղագս քերականին» երկի բնագիրը (1977 թ., հրատ. Լ. Խաչիկյան և Ս. Ավագյան), որտեղ հայ քերականական գրականության մեջ առաջին անգամ հատուկ բաժին է նվիրված հայոց լեզվի շարահյուսությանը:

Մեծ աշխատանք է կատարված հայ միջնադարյան իրավունքի հուշարձանների ուսումնասիրման և հրատարակման բնագավառում: Այստեղ առաջին հերթին պետք է հիշատակել Մատենադարանի ձեռագրերի հիման վրա կատարված «Կանոնագիրք Հայոց»-ի երկու սովոր հատորների (1-ին հ. 1964 թ., 2-րդ հ. 1971 թ., կաղմ. Վ. Հակոբյան) և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկու խմբագրությունների քննական բնագրերի հրատարակությունը (1974 թ., հրատ. Խ. Թորոսյան): Հրատարակվել է նաև հայ իրավագիտական մտքի մի այլ հետաքրքիր հուշարձան՝ «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց» (1967 թ., հրատ. Ծ. Պողոսյան), որը կարևոր սկզբնաղբյուր է հայկական գաղութների

XVIII դարի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար: Այս առումով ոչ սլակաս հետաքրքրություն են ներկայացնում նաև «Կամենեց—Պողոսկրադարի հայկական դատարանի արձանագրությունները», հրատարակված 1963 թ. Վ. Գրիգորյանի կողմից: Ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել են «Շահապիվանի կանոնները» (1959 թ., թարգմ. Ս. Ղ. Արևշատյան) և «Դվինի 2-րդ ժողովի կանոնները» (1962 թ., թարգմ. Ս. Ղ. Արևշատյան): Բոլոր այս հրատարակումները և թարգմանությունները հայ իրավաբանական մտքի պատմաբաններին և ընդհանրապես միջնադարագետ պատմաբաններին առատ նյութ տվեցին ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի հարավում, Անհաստանում, Ուկրաինայում և այլ երկրներում հայ վերաբնակիչների կողմից հիմնադրված գաղութների սոցիալ-տնտեսական կյանքի և իրավական հարաբերությունների ուսումնասիրման համար:

Վերջին 25 տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բնագիտական մտքի հուշարձանների բնագրերի հրատարակությանը և ուսերեն թարգմանություններին: Հրատարակվել է XIII դարի խոշոր բժիշկ Գրիգորիսի, նախկինում չհրատարակված «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» աշխատության բնական բնագիրը (1962 թ., կազմ. Ա. Կժոյան), իսկ XII դարի ականավոր բժիշկ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության ուսերեն թարգմանությունը 1968 թ., նրա ծննդյան 850-ամյա տարելիցի առիթով, ունեցավ իր երկրորդ՝ լրացված հրատարակությունը:

Ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել Արուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» (1974 թ., թարգմ. Ս. Վարդանյան) և XIII դարի բժիշկ Իշոխի «Գիրք ի վերայ բնութեան» (1979 թ., թարգմ. Ս. Վարդանյան) բժշկական աշխատությունները: Հրատարակվել է նաև միջնադարյան անասնաբուժության վերաբերյալ հետաքրքիր մի երկի՝ «Բժշկարան ձիոյ»-ի հայերեն բնագիրը (1980 թ., հրատ. Բ. Չուգասոյան): Առավել խոշոր հրատարակում կլինի XV դարի ականավոր հայ բժիշկ Ամիրգովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» դեպագիտական աշխատության ուսերեն թարգմանության հրատարակությունը, որն արդեն արտադրություն է իջեցված: Բժշկության պատմաբանների և բուսաբուժության ժամանակակից մասնագետների մեծ հետաքրքրություն առաջացնող այս աշխատանքը Մատենադարանը հրատարակում է ՍՍՀՄ ԳԱ բնագիտության և տեխնիկայի պատմության ինստիտուտի հետ համատեղ:

Հին հայկական բնագիտական մտքի առավել խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Անանիա Շիրակացու (VII դար) ժառանգությունը արդեն հարյուր տարուց ավել զբաղեցնում է գիտության պատմաբանների ուշադրությունը: Նրա մաթեմատիկական, աշխարհագրական և տոմարագիտական աշխատությունների բնագրերը և դրանց նվիրված հետազոտություններ են հրատարակվել և՛ նախահեղափոխական շրջանում, և՛ սովետական՝ Մատենադարանի վերակազմությունից դեռ շատ առաջ: Անանիա Շիրակացու աշխատությունների բնական բնագրերը հրատարակվել են 1944 թ. (հրատ. Ա. Գ. Աբրահամյան): Նկատի ունենալով նրա նկատմամբ շփուլացող հետաքրքրությունը, և նրա ժառանգությունն ավելի լայն լուսաբանելու նպատակով, Մատենադարանը ուսերեն թարգմանությամբ հրատարակել է նրա տիեզերագիտական ստեղծագործությունները՝ «Տիեզերագիտություն» ընդհանուր խորագրի տակ (1962 թ., թարգմ. Ք. Տեր-Դավթյան և Ս. Արևշատյան): Շիրակացու ձեռագրերի վրա աղբյուրա-

գիտական և բնագրագիտական աշխատանքը Մատենադարանում շարունակվում է:

Մատենադարանի հետազոտություններում և հրապարակումներում նշանակալի տեղ են զբաղեցնում գեղարվեստական գրականության հուշարձանները՝ միջնադարյան Հայաստանի շափածոն և արձակը: Այս բնագավառում մեծ ներդրում արեց ինստիտուտի առաջատար աշխատակիցներից մեկը՝ հայտնի բանասեր և պատմաբան, հանգուցյալ պրոֆ. Ասատուր Շմափոնի Մնացականյանը: Դեռ 1956 թ. նրա կողմից հրատարակվեց «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» բնագրերի արժեքավոր ժողովածուն: Նաև հետագա տարիներին նա շարունակեց բեղմնավոր աշխատել միջնադարի քնարերգուների բանաստեղծական ժողովածուների վրա, հրապարակեց Վարդան Անեցու (XI դ.), Գրիգոր Տղայի (XII դ.) ստեղծագործությունների քննական բնագրերը, հրատարակեց «Հայ միջնադարյան հանելուկներ» բնագրերի ժողովածուն (1980 թ.): Մինչև իր վախճանը՝ 1983 թ., նա հասցրեց ավարտել 60 հեղինակալին մամուլ ծավալով հիմնարար մի աշխատություն, որն առավել լրիվությամբ բնագրվում է հայրենները՝ միջնադարի ժողովրդական բանաստեղծական արվեստի մարգարիտները: Այս աշխատանքը արտադրություն է իջեցված և լույս կտեսնի 1987 թ.: Գեղարվեստական գրականության հուշարձաններով զբաղվել են Մատենադարանի նաև այլ աշխատակիցներ: Հրատարակվել է Մարտիրոս Ղրիմեցու (1959 թ., հրատ. Ա. Մարտիրոսյան), Հովասափ Սերաստացու (1962 թ., հրատ. Վ. Գևորգյան), Հովհաննես Կարնեցու (1962 թ., հրատ. Շ. Նազարյան), Սիմեոն Ապարանեցու (1976 թ., հրատ. Կ. Սուքիասյան) բանաստեղծությունների ժողովածուները, Գրիգոր Նարեկացու «Գանձերը և տաղերը» (1981 թ., հրատ. Ա. Քյուշկերյան), գեղարվեստական գրականության թարգմանական հուշարձաններից՝ «Պատմութիւն Փարէզի և Վեննայի, Պատմութիւն Վենետիկ քաղաքին» (1966 թ., հրատ. Կ. Մելիք-Օհանջանյան), «Խրատք նուշիրուանի» (1966 թ., հրատ. Բ. Զուգասզյան), «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» (1-ին հատ. 1969 թ., 2-րդ հատ. 1972 թ., հրատ. Ա. Մարտիրոսյան):

Բաղմամյա աշխատանքի պտուղ էր հայ միջնադարյան գրականության նըշանավոր ստեղծագործության՝ Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» պոեմի ուսերեն տողացի գիտական թարգմանությունը: Մատենադարանի աշխատակիցներ Մ. Դարբինյան-Մելիքյանի և Լ. Խանյարյանի կատարած այս թարգմանությունը արտադրության մեջ է և շուտով լույս կտեսնի: Այդ թարգմանության հիման վրա ուրիշ թարգմանիչներ աշխատում են դրա գեղարվեստական թարգմանության վրա՝ ուսերեն, ուկրաիներեն և այլ լեզուների:

Մատենադարանի հրատարակություններում աչքի ընկնող տեղ է զբաղեցնում մատենական գեղանկարչությունը՝ միջնադարյան հայկական մանրանկարչությունը նվիրված հրապարակումները: Միջնադարյան արվեստի այս ճյուղի նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը բավարարելու համար 1968 թ., երեք լեզուներով՝ հայերեն, ուսերեն, ֆրանսերեն, հրատարակվեց «Հայկական մանրանկարչություն» գունազարդ ալբոմը: Այս ուղղությամբ աշխատանքը պլանաշափորին շարունակվեց. 1973 թ. լույս տեսավ «Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում» (հրատ. Ա. Գևորգյան) թեմատիկ ալբոմը: Մատենանկարչության դպրոցներից երկուսին է նվիրված «Վասպուրականի մանրանկարչություն» ուսումնասիրությունը և ալբոմը (1978 թ., աշխատ. Լ. Հակոբյան) և «Ղրիմի հայ մանրանկարչությունը» (1978 թ., աշխատ.

է. Կորխմազյան): 1982 թ. հրատարակվեց «Գիմանկարը հայկական մանրանկարչության մեջ» թեմատիկ ալբոմը (Ա. Գևորգյան), որը հետաքրքրություն առաջ բերեց ոչ միայն արվեստաբանների, այլև ընթերցողների լայն շրջանում, քանի որ պարունակում է քաղաքական գործիչների, փիլիսոփաների, բանաստեղծների, հոգևոր գործիչների, գիտնականների, մատենագիրների, միջնադարյան ուսուցչապետների եզակի դիմանկարներ: 1984 թ. «Ավրորա» հրատարակչությունը (Լենինգրադ) երեք լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) լույս ընծայեց Մատենադարանի պատրաստած «13—14-րդ դարերի հայկական մանրանկարչությունը Մատենադարանի հավաքածոյում» գունազարդ նոր ալբոմը (կազմ. և հեղինակներ է. Կորխմազյան, Ի. Դրամբյան, Հ. Հակոբյան), որտեղ մեծ մասամբ ընդգրկված են հայկական մատենանկարչության նախկինում չհրատարակված հուշարձաններ: Ներկայումս ավարտվում է տարբեր գեղանկարչական դպրոցների և նշանավոր ծաղկող վարպետների ստեղծագործությունը նվիրված մի քանի ալբոմների և ուսումնասիրությունների նախապատրաստման աշխատանքը:

Մատենադարանի ձեռագրական հավաքածոյում կան բազմաթիվ (ավելի քան 700) երաժշտական ձեռագրեր հին հայկական խաղային նոտագրությամբ, որոնց վերձանման բանալին կորել է դեռևս ուշ միջնադարի շրջանում: Չայնագրային այս համակարգի վերձանման ուղղությամբ աշխատանքներ են տարվում արդեն շատ տարիներ: Հայկական նոտագրության գաղտնիքի բացահայտմանը աստիճանաբար մոտեցնում են անվանի երաժշտագետներ Ք. Քուշնարյանի, Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի հետազոտությունները:

Միջնադարյան խոշոր երաժիշտներից մեկին՝ Ներսես Շնորհալուն (XII դար) է նվիրված Ն. Թահմիզյանի ուսումնասիրությունը (1973 թ.), որտեղ հավելվածի ձևով, եվրոպական նոտաների համակարգով տրված է Շնորհալույց պահպանված երաժշտական ժառանգության ձայնագրությունը: 1985 թ. լույս տեսավ Ն. Թահմիզյանի նոր աշխատությունը՝ «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V—XV դդ.»։ Մատենադարանը ուսերին թարգմանությամբ լույս է ընծայել XVII դարի խոշոր երաժիշտ և տեսաբան Թամբուրի Հարությունի «Արևելյան երաժշտության ձեռնարկ»-ը (1968 թ., թարգմ. Ն. Թահմիզյան): «Արևելքի երկրների երաժշտական գեղագիտություն» գրքում (Մոսկվա, 1967) հրատարակվել է հայ միջնադարյան փիլիսոփաների և գիտնական երաժիշտների աշխատություններից բնագրերի ընտրանի, որտեղ տրված են ընդարձակ քաղվածքներ երաժշտության տեսության և կատարողական արվեստի մասին (կազմ. և թարգմ. Ս. Արևշատյան և Ն. Թահմիզյան):

Մատենադարանի գիտական անձնակազմն այժմ ունի 42 աշխատակից, այդ թվում գիտությունների 8 դոկտոր և 25 թեկնածու, որոնց ջանքերով ստեղծվել են տասնյակ գրքեր և հարյուրավոր հոդվածներ՝ նվիրված հայ միջնադարագիտության ամենատարբեր ճյուղերին: Այդ աշխատությունները հրատարակվել են ինչպես Հայաստանում, այնպես և Սովետական Միության տարբեր քաղաքներում և արտասահմանյան գիտական մամուլում: Բացի վերը հիշատակված հրատարակումներից, Մատենադարանի աշխատակիցներից շատերը հանդես են եկել ընդհանրացնող բնույթի մենագրություններով, որոնք մեծ մասամբ գրվել և պաշտպանվել են որպես դոկտորական դիսերտացիաներ, ինչպես, օրինակ, Գ. Արզարյանի «Սերեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը» (1965 թ.), Շ. Նաղարյանի «Պետրոս Ղափանցի» (1969 թ.), Ա. Մարտիրոսյա-

նի «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» (1972 թ.), 2. Փափազյանի «Հողային հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI—XVII դարերում» (1972 թ.), Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական գիտության ձևալորումը հին Հայաստանում» (1973 թ.), Ն. Թահմիզյանի «Երաժշտության տեսությունը հին Հայաստանում» (1977 թ.), Վ. Գրիգորյանի «Ուկրաինացի և Լեհաստանի հայկական գաղութների պատմությունը» (1980 թ.) և այլն:

Անցած 25 տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել Մատենադարանի ձեռագրական ֆոնդերի գիտական նկարագրությանը: Երկարամյա աշխատանքի արդյունք էր հին հայկական ձեռագրերի երկհատոր համառոտ ցուցակի հրատարակությունը (1-ին հատ. 1965 թ., 2-րդ հատ. 1970 թ.), որի մեջ արված է 1969 թ. հունվարի մեկի դրությամբ հավաքածոյում եղած 10408 հայերեն ամբողջական ձեռագրերի նկարագրություն (կազմ. Օ. Եգանյան, Փ. Անթարյան, Ա. Զեյթունյան): Գրանից հետո գիտական մատենագիտության բաժնի աշխատակիցները պրոֆ. Ա. Շ. Մնացականյանի ղեկավարությամբ ձեռնարկեցին «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ը կազմելուն, որն ընդգրկում է ձեռագիր հուշարձանների սպառիչ նկարագրությունը: 1984 թ. լույս տեսավ 1-ին հատորը (կազմ. Օ. Եգանյան, Փ. Անթարյան, Ա. Զեյթունյան), որն ամփոփում է հայերեն ձեռագրերի ֆոնդի № № 1—300 գրչագրերի նկարագրությունը: Հատորն սկսվում է պրոֆ. Ա. Մնացականյանի ընդարձակ ներածական հոդվածով՝ նվիրված Մատենադարանի ձեռագրական ֆոնդերի պատմությանը, ցուցակի կազմության և ձեռագրերի գիտական նկարագրության սկզբունքներին, ճոխանում է Օ. Եգանյանի կազմած ամենամանրամասն ցանկերով: «Մայր ցուցակի» 1-ին հատորի լույս տեսնելը խոշոր իրադարձություն էր ոչ միայն Մատենադարանի, այլև իրենց թեմատիկայով ձեռագիր հուշարձաններին առնչվող հանրապետության մյուս ինստիտուտների համար: Հաջողությամբ շարունակվում է աշխատանքը հաջորդ հատորների վրա: Տպագրության է ուղարկված 2-րդ հատորը, ավարտվում է աշխատանքը 3-րդ և 4-րդ հատորների վրա:

«Մայր ցուցակի» ստեղծման աշխատատար գործի հետ միասին, Մատենադարանի աշխատակիցների կողմից ներքին օգտագործման համար կազմվել են մի ամբողջ շարք թեմատիկ ցուցակներ և բարտարաններ, որոնք բնագրագետների, աղբյուրագետների, հնագրագետների և տարբեր մասնագիտության հայագետ-միջնադարագետների կողմից օգտագործվում են որպես յուրատեսակ մատենագիտական ձեռնարկներ: Այդ բարտարանները տրամադրվում են նաև Մատենադարան եկած սովետական և արտասահմանյան մասնագետներին և անհամեմատ հեշտացնում ու արագացնում են բազմահազարանոց ձեռագրական ֆոնդից իրենց հետաքրքրող նյութերի հավաքման նրանց աշխատանքը: Այս բարտարաններն ու գրացուցակները կազմված են ըստ միջնադարյան գիտությունների, գրականության և արվեստի ճյուղերի՝ պատմագրության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, իրավունքի, բժշկության, բնական գիտությունների, կրոնադավանաբանական գրականության, մանրանկարչության և այլն: Այդ թեմատիկ գրացուցակներից մեկը՝ փիլիսոփայական ձեռագրերի մատենագիտական ցանկը՝ ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է «Մատենադարանի բանբերում» և արդեն նշանակալի օգնություն է ցույց տվել միջնադարագետ-փիլիսոփաներին: Փորձը ցույց է տվել, որ նման գրացուցակ-ցանկերի հրատարակությունը ասիպողական անհրա-

ժեշտություն է, և՛ որ գրանք այսուհետև էլ, մինչև «Մայր ցուցակի» հրատարակության ավարտը (իսկ դա ամենախիստ հաշվումներով կտևի 20—25 տարի), անվոխարինելի նեցուկ կլինեն գիտության շատ ճյուղերի միջնադարագետ-հետադատողների համար:

Պետք է նշել, որ ձեռագրական ֆոնդի աճը իր արտահայտությունն է գրանում մասնույում: Յուրաքանչյուր 1—2 տարվա ընթացքում նոր ստացված ձեռագրերի համառոտ նկարագրությունը հրատարակվում է գիտական պարբերականներում, և մասնագետները նրանց բովանդակության մասին անհրաժեշտ տեղեկություններ են ստանում: Բանն այն է, որ նոր ձեռագրերը, համաձայն հնից ժառանգած կանոնի, հերթական համար են ստանում անկախ գրչագրի ստեղծման ժամանակից և, բնականաբար, նրանց նկարագրությունը կմանի «Մայր ցուցակի» վերջին հատորների մեջ, որոնց տպագրվելու հերթը կհասնի մոտ երկու տասնամյակ հետո: Այսպիսով, բնագրագետների, ձեռագրագետների, հնագրագետների, ինչպես նաև պատմաբանասիրական գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչների այսօրվա սերունդը հնարավորություն է ստանում հետևել Մատենադարանի ձեռագրական ֆոնդի աճին և ակտիվորեն գիտական շրջանառության մեջ ներառնել գրչության և մանրանկարչության առավել արժեքավոր հուշարձանները:

Վերջին տարիների ձեռագրագիտական և հնագրագիտական ուսումնասիրությունների մեջ հատուկ հիշատակության է արժանի 981 թվականի հայերեն հնագույն թղթյա ձեռագրի վրա կատարված աշխատանքը: Գրչության այս եղանակի հուշարձանը գիտապատմական և մշակութային մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն որպես Սովետական Միության մեջ թղթի վրա գրված հնագույն գրչագիր, այլ նաև որպես հին հալ հեղինակների և հունարենից թարգմանված պատմական, փիլիսոփայական և մեկնողական ստեղծագործություններ պարունակող հազվագյուտ ժողովածուի ընդօրինակություն: Ձեռագրի 1000-ամյակի առթիվ Մատենադարանի գիտական խորհուրդը որոշում կայացրեց այն հրատարակելու մասին: Բնագիրը պատրաստված է տպագրության և մոտակա ժամանակներս լույս կտեսնի երկու գրքով: Առաջին գիրքն ընդգրկում է ձեռագրի նմանատիպ հրատարակությունը, երկրորդը՝ ամբողջ ժողովածուի վերծանված բնագիրը, որը ձեռագրի տարիքի և նախկինում պահպանության աննպաստ պայմանների պատճառով խիստ վնասվել է: Հրատարակությունը նախապատրաստել է ինստիտուտի փորձառու ձեռագրագետներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մաթևոսյանը:

Մատենադարանի, որպես գիտահետազոտական կենտրոնի, գործունեությունը իր արտացոլումն է գտնում նաև գիտական նստաշրջաններում և կոնֆերանսներում: Անցած 25 տարիների ընթացքում անց է կացվել 19 գիտական նստաշրջան, որոնցում Մատենադարանի աշխատակիցները ինստիտուտում մշակվող հնագրագիտության և գիտությունների պատմության բոլոր ճյուղերի վերաբերյալ կարդացել են ավելի քան երեք հարյուր գեկուցում: Հարկ է նշել, որ Մատենադարանը գործնական մասնակցություն է ունեցել ՍՍՀՄ ԳԱ հնագրագիտական հանձնաժողովի կազմակերպած երեք համամիութենական կոնֆերանսների՝ 1960, 1969 և 1977 թթ.: Առաջին և երրորդ կոնֆերանսներն անց են կացվել Երևանում, Մատենադարանի հարկի տակ, երկրորդը՝ Թբիլիսիում, Վրացական ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտում: Այս կոնֆերանսները, որոնց սկիզբը դրեցին ալեգր. Մ. Ն. Տիխոմիրովը, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Լ. Ս.

Խաչիկյանը և Վրացական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ի. Վ. Արուլաձեն, ներկայացուցչական ֆորումներ դարձան, որոնցում միութենական հանրապետությունների և ՍՍՀՄ ԳԱ հնագրագիտական հանձնաժողովի գիտնականները ամբողջացնում են իրենց մի քանի տարիների աշխատանքների արդյունքները, ծանոթանում հնագրագիտության և պատմական օժանդակ գիտությունների մյուս բնագավառների նորագույն նվաճումներին: Մատենադարանի աշխատակիցները ղեկուցումներով հանդես են եկել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում կայացած միջազգային շատ կոնգրեսներում, կոնֆերանսներում և սիմպոզիումներում: Նշված գիտական նստաշրջաններից և կոնֆերանսներից բացի, Մատենադարանը ակտիվ մասնակցություն է ունեցել Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին, ականավոր գիտնական և բժիշկ Մխիթար Հերացու ծննդյան 850-ամյակին, փիլիսոփա Դավիթ Անհաղթի 1500-ամյակին, Գլաձորի համալսարանի 700-ամյակին նվիրված և այլ հորելյանական նստաշրջանների: Այդ հորելյանների առթիվ Մատենադարանը հրատարակել է ուսումնասիրություններ և բնագրեր, աշխարհաբար և ռուսերեն թարգմանություններ, գիտահանրամատչելի գրքեր, գրքույկներ, ալբոմներ, բուկլետներ և այլն:

Անցած ժամանակի ընթացքում հրատարակվել է «Բաներ Մատենադարանի» 14 հատոր, որոնցում հրապարակվել են միջնադարյան հայ մատենագրության բոլոր բնագավառներին վերաբերող հոդվածներ, բնագրեր և թարգմանություններ, հնագրագիտական ուսումնասիրություններ՝ նվիրված ինչպես տաանձին ձեռագիր հուշարձանների, այնպես էլ Հայաստանում և նրա սահմաններից դուրս պահվող ամբողջ հավաքածոների: Բոլոր հոդվածներն ու հրապարակումները օժտված են ռուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով: «Մատենադարանի բաներում», բացի ինստիտուտի աշխատակիցներից, հայագիտական հոդվածներով և հրապարակումներով հանդես են գալիս նաև արտասահմանյան գիտնականներ և Սովետական Միության այլ հանրապետություններից մասնագետներ:

Իր հիմնական պարտականությունների հետ միասին, վերջին 25 տարիների ընթացքում Մատենադարանը կատարել և կատարում է նաև թանգարանի դեր: Հայ ժողովրդի ձեռագրական ժառանգության նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը, սովետական և արտասահմանյան հյուրերի և զբոսաշրջիկների անընդհատ հոսքը (տարեկան ավելի քան 50 հազար), որոնք ձգտում են լինել Մատենադարանի հարկի տակ և հաղորդակցվել Հայաստանի հոգևոր մրշակույթի հուշարձաններին, ասում են այն մասին, որ ձեռագրերի այժմյան ցուցադրությունը և դրա համար հատկացված ցուցասրահը ընդարձակման կարիք են դրում: Մատենադարանի տնօրենությունը նոր ցուցադրություն է պատրաստում՝ այդ նպատակի համար նկատի ունենալով ևս երկու ընդարձակ սրահներ: Այդ պլանի արագ իրագործմանը կնպաստի գիտական նոր մասնաշենքի և լրացուցիչ ստորերկրյա պահոցի շինարարության ավարտումը:

Ընթերցող լայն հասարակայնության հետաքրքրությունները բավարարելու համար սկսվել է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գիտահանրամատչելի գրքույկների մատենաշարի հրատարակությունը, որի մեջ լուսարանվում են հին և միջնադարյան հայկական գիտության, գրականության և արվեստի տարրեր բնագավառներ: Այս մատենաշարով Մատենադարանի կողմից արդեն հրատարակվել են «Թժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում» (1983 թ., հեղ. Ա. Վարդանյան), «Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում»

(1983 թ., հեղ. ն. Քահմիզյան), «Հին հայ թարգմանական գրականություն» (1984 թ., հեղ. Ն. Տեր-Պետրոսյան): Գլաձորի համալսարանի 700-ամյակի տոնակատարության առթիվ լայն շրջանի ընթերցողների և մասնագետների համար Մատենադարանի կողմից հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվեցին «Գլաձորի համալսարանը Միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (հեղինակներ Ս. Արևշատյան և Ա. Մաթևոսյան) և ռուսերեն թարգմանությամբ հետաքրքիր բնագրերի ընտրանի՝ «Աղբյուրներ Միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների սպամոթության (12—15 դդ.)» խորագրով (կազմ., թարգմ. և ներած. Ք. Տեր-Դավթյանի) գրքույկները, Գլաձորի մանրանկարչական դպրոցի մանրանկարների գունավոր բուկլետը, այդ դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներ Թորոս Տարոնացուն և Ավագին նվիրված պատկերազարդ ալբոմները: Գիտահանրամատչելի մատենաշարի հրատարակությունը կրնա զլայնվի: Արդեն պատրաստ են մանրանկարչությանը, միջնադարյան շափածոյին և արձակին, բառարանագրություններ և փիլիսոփայություններ նվիրված գրքույկները: Մի բանի հրատարակություններ է ունեցել Մատենադարանի ուղեցույցը՝ ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով:

Մատենադարանի տնօրենության և գիտական խորհրդի կողմից մշակվել է առաջիկա տասնամյակների գիտահետազոտական աշխատանքների պլանը, որը նախատեսում է հայ բնագրագիտության, աղբյուրագիտության և մատենագրության բոլոր ճյուղերին նվիրված հետազոտական աշխատանքի զարգացում: 25 տարիների կատարած աշխատանքն ու կուտակած փորձը հիմք են տալիս հուսալ, որ Մատենադարանի աշխատակիցների կողեկտիվը հաջողությամբ կըկատարի իր վրա դրված պատասխանատու և պատվաբեր նոր խնդիրները:

С. С. АРЕВШАТЯН

25-ЛЕТНИЕ ИТОГИ ДЕЯТЕЛЬНОСТИ ИНСТИТУТА
ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА
(К 25-летию реорганизации Матенадарана)

Резюме

3-го марта 1959 г. постановлением Совета Министров Армянской ССР Государственное хранилище рукописей было преобразовано в Научно-исследовательский институт древних рукописей «Матенадаран» при Совете Министров АрмССР. На институт были возложены функции ведущего научного учреждения по армянской текстологии, источниковедению и научной библиографии. В статье обобщаются итоги 25-летней деятельности Матенадарана по изучению и публикации памятников армянской историографии, философии, естествознания, книжной живописи, художественной литературы и других отраслей духовной культуры средневековой Армении. Освещена работа по сбору, хранению и реставрации рукописей, научному описанию рукописного фонда, а также другие стороны исследовательской, музейной и научно-просветительской деятельности института. Перспективный план научно-исследовательских работ Матенадарана предусматривает дальнейшее развитие всех отраслей армянской археографии, текстологии и источниковедения.

S. S. AREVCHATIAN

LES RESULTATS DES 25 ANNEES DE TRAVAIL DE L'INSTITUT
MACHTOTZ DES MANUSCRITS ANCIENS*(A l'occasion du 25e anniversaire de la réorganisation du
Maténadaran)*

Résumé

Le 3 mars 1959, sur décision du Conseil des Ministres de la R. S. S. d'Arménie, le Dépôt d'Etat des manuscrits fut transformé en Institut de recherches scientifiques sur les manuscrits anciens "Maténadaran", près le Conseil des Ministres de la R. S. S. d'Arménie. L'Institut assumait les fonctions d'institution scientifique principale pour la textologie, l'étude des sources et la bibliographie scientifique arméniennes. L'article résume les résultats de 25 ans de travail du Maténadaran dans le domaine de l'étude et de la publication des oeuvres de l'historiographie, de la philosophie, des sciences naturelles, de l'enluminure, des lettres, ainsi que d'autres domaines de la culture spirituelle de l'Arménie médiévale. Il éclaire aussi les efforts fournis pour la collection, la conservation et la restauration des manuscrits, leur description scientifique, de même que les autres aspects des activités de l'Institut, en tant que musée, centre de recherches scientifiques et de vulgarisation. En perspective, les plans des recherches scientifiques du Maténadaran prévoient le développement ultérieur de tous les domaines de l'archéographie, de la textologie et de l'étude des sources arméniennes.